

ՍԵՎԱԿ ԴԱԶԱՐՅԱՆ
SEVAK GHAZARYAN

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԿԱՐԾԵՑՅԱԼ ՇԱՊՈՒՅ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՎ ՎԱՂ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԱՐՑԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Դեռ ուսանողական տարիներից, բանաստեղծական գործերին զուգահեռ երևան են գալիս և ուշադրության արժանանում Պարույր Ղազարյան-Սևակի գրականագիտական ելույթներն ու հրապարակումները: Ուշագրավ են հատկապես Նաիրի Ջարյանի («Ն. Ջարյանի պոեզիան Հայրենական պատերազմի շրջանում», 1943թ.) և Վահագն Դավթյանի պոեզիայի մասին (1944թ.) զեկուցումները, «Դանիել Վարուժանի պոեզիան» ավարտական աշխատանքը (1945թ.), որոնցում արդեն երևում է հասունություն ապրող, սեփական ոճ, կարծիք ու տեսակետ ունեցող և այդ կարծիքն ու տեսակետը համոզիչ փաստարկումներով պաշտպանել և ապացուցել կարողացող ապագա գիտնականը: Հետագայում այս հատկանիշները ավելի կայուն դարձան. ասպիրանտ Պ. Սևակի մասին արդեն կարելի է ասել, թե կայացել և հասունացել է գրականագետ-բանասերը:

1945թ.-ին գերազանցության դիպլոմով ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը Պ. Սևակն ընդունվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան հայոց հին և միջնադարյան գրականություն մասնագիտությամբ: Հաստատվում են դիսերտացիայի թեման («Կարծեցյալ Շապուի Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում») և գիտական ղեկավարը մեծ հայագետ-բանասեր Կարապետ Մելիք-Օհանջանյանը:

Թեմայի ընտրությունը, որքան էլ զարմանալի թվա առաջին հայացքից, ամենևին էլ պատահական չէր. հայոց հին և միջնադարյան գրականությունը մշտապես եղել է Պ. Սևակի ուշադրության կենտրոնում և նրա գրական նախասիրությունների մեջ զբաղեցրել է առաջնային տեղ. պահպանվել են հին և միջնադարի գրականության ներկայացուցիչների ստեղծագործություններից արված քաղվածքների, նշումների ու մանրակրկիտ մշակումների տասնյակ ուսանողական տետրեր, որոնք լավագույնս վկայում են այդ մասին (հասուն շրջանի գիտական գործունեությունն էլ դրա վառ ապացույցն է):

Գիտական ղեկավարի ընտրությունը ևս պատահական չէր Պ. Սևակը մեծագույն ակնածանք ուներ Կ. Մելիք-Օհանջանյանի հանդեպ, որին շատ շուտով գումարվեց որդիական անկեղծ ու անմնացորդ սերը: Կ. Մելիք-Օհանջանյանն էլ ճանաչում էր իր ասպիրանտին (մասնավորապես Ա. Ղանալանյանի և Պ. Սևակի այլ դասախոսների ներկայացմամբ ու երաշխավորությամբ)¹ որպես խոհուն ու խոստումնալից բանասերի. սիրում էր իր ասպիրանտին իբրև որդու և առավել խստապահանջ էր, քան կարող էր լինել հայրը: «Պարույրը նրան (Կ. Մելիք-Օհանջանյանին – Ս. Ղ.) կոչում էր **ահավոր**, այդ բառի ևս մի կիրառություն, որ ոչ մի առնչություն չուներ բառարմատի հետ: Տվյալ դեպքում ահ հարուցողը, ահավորը Մելիք-Օհանջանյանի խստապանջ լինելն էր: Եվ կասեր Պարույրն իբրև թե սաստիկ վրդովմունքով՝ ա՛յ տղա, ամեն անգամ այնպես է քննում՝ կարծես ինքն էլ հանձնարարած գրքերը հենց նոր կարդացել է հատկապես ինձ քննելու համար: Չէ՛, նրան խաբել չի լինի, ահավոր բան է»¹:

Այսպես ահա, «ահավոր-սիրելի» գիտնականի ղեկավարությամբ, արդեն եղած իմացության և գիտելիքների պաշարը անվերջ մեծացնելով (դիսերտացիայի առնչությամբ կարդացած գրականության ցանկը անցնում է 100-ից) Պ. Սևակը ձեռք է զարկում «Կարծեցյալ Շապուի Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Չայաստանում» աշխատությանը:

Պ. Սևակի արխիվում պահպանվել է «Կարծեցյալ Շապուի...»-ի մեկ օրինակը միայն, որ ձեռագիր է, շարադրված է A4 ֆորմատի թղթերի վրա, էջակալված-համարակալված է հեղինակի կողմից և կազմում է 110 էջ²: Այս միակ օրինակը աշխատանքային-սևագրային բնույթի է. դա հաստատվում է ոչ միայն աշխատության կիսատ լինելով, այլև նրանում առկա մի քանի ոչ շատ էական (և հեշտությամբ շտկվելիք) անճշտություններով կապված պատմական ինչ-ինչ թվականների հետ, երբեմն հանդիպող կրճատ գրված բառերի, անհարթությունների առկայությամբ, որոնք անկասկած խոսում են տեքստի անմշակ լինելու մասին:

Ցավոք, հնարավոր չէ որոշել աշխատության գրման ստույգ ժամանակը. դիսերտացիայի էջերից և ոչ մեկում չկա որևէ թվագրություն, որ թույլ կտար պարզություն մտցնել այս հարցում: Չայտնի է, որ Պ. Սևակի ասպիրանտական տարիները ընդգրկում են 1945-48 թվականները, իսկ վերոնշյալ աշխատանքային տետրերից մեկը թվագրված է «1947թ. հունիս»: Այս տետրը, զանազան

¹ Լևոն Զախվերդյան, Պարույրը, Երևան, «Սովետական գրող» իր., 1987թ., էջ 21:

² «Կարծեցյալ Շապուի...»-ից մեջբերումներ անելիս համապատասխան էջերը կնշվեն տեղում:

նշումների ու գրառումների հետ մեկտեղ, պարունակում է նաև գրվելիք աշխատության պլան-օրագիրը՝ համապատասխան գլուխներով: Ըստ այդմ, ամենայն հավանականությամբ, «Կարծեցյալ Շապուհ...»-ի շարադրանքը 1947 թվականի հունիս ամսին առնվազն դեռ ավարտված չէր: Բայց սա միայն ենթադրություն է, որ առայժմ, ցավոք, փաստական այլ ապացույցներով չի ամրապնդվում:

«Կարծեցյալ Շապուհ...»-ը բաղկացած է «Առաջաբան»-ից, «Ներածական»-ից և երկու գլուխներից, որոնցից առաջինը վերնագրված է «Ճշմարիտ և Կարծեցյալ Շապուհների հարաբերության հարցը», իսկ երկրորդը «Կարծեցյալ Շապուհի ժամանակը»: Ըստ որում այս երկրորդ գլուխը անավարտ է մնացել:

«Կարծեցյալ Շապուհ...»-ի որևէ այլ, ավելի ամբողջական տարբերակ (ո՛չ ձեռագիր, ո՛չ մեքենագիր) Պ. Սևակի արխիվում չկա: Այս հանգամանքը շեշտվում է այն պատճառով, որ գրականագիտության մեջ, մասամբ հենց իր Պ. Սևակի «մեղքով», կարծիք է ստեղծվել, թե իր դիսերտացիոն աշխատությունը Պ. Սևակը «համարյա թե ավարտել էր»: Այս մասին նաև խոսում է ինքը հեղինակը. «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրության մեջ, ասպիրանտական տարիները հիշելիս, Պ. Սևակը գրում է. «**համարյա վերջացրել էի** դիսերտացիոն մենագրությունը»³: Ավելի ուշ Ալբերտ Արիստակեսյանը իր աշխատության մեջ նշում է, թե Պ. Սևակը «**համարյա վերջացրել էր** «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Չայաստանում» մենագրությունը»⁴: Այսպես տարածվում է **համարյա վերջացած** լինելու տեսակետը: Ցավոք, քիչ հավանականություն կա (հրաշքի պես մի բան կլինի), որ գոյություն ունենա «Կարծեցյալ Շապուհ...»-ի ավելի վերջնական, **համարյա վերջացրած** տարբերակ, ըստ երևույթին այդ **վերջնականը** ամբողջացած էր Պ. Սևակի գլխում, իսկ առկա օրինակը, հակառակը, իսկապես անավարտ է (նույնիսկ կարելի է ասել կիսատ է):

Այս առիթով ամենից առաջ հարկ է ուշադրություն դարձնել աշխատության վերնագրին «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Չայաստանում»/Ընդգծումը Ս.Ղ./: Ինչպես տեսնում ենք, վերնագիրը բաղկացած է երկու հավասարաթիվ մասերից: Ըստ այդմ միանգամայն տրամաբանական է կարծել, թե աշխատության բովանդակությունը պետք է առնչվեր և Կարծեցյալ Շապուհին, և Չայաստանում վաղ վերածննդի հարցերին: Սինչդեռ աշխատության առկա օրինակը բացառապես նվիրված է

³ Պ. Սևակ, *Անցյալը ներկայացած, կազմեցին, խմբագրեցին և ծանոթագրեցին Ա. Ղազարյանը և Ս. Ղազարյանը*, Ե., «Ոսկան Երևանցի», 2011, էջ 23: Ընդգծումը Ս.Ղ.:

⁴ Ալբերտ Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, Չայկական ՍՍՀ Գա հր., 1974թ., էջ 99: Ընդգծումն իմն է - Ս.Ղ.:

Կարծեցյալ Շապուհին և դեռ այս խնդրում էլ իր վերջնական ավարտին չի հասնում: Փաստորեն վերնագրի ընդգծված մասի քննությունը ընդհանրապես բացակայում է, և պայմանավորված այդ բացակայությամբ՝ Պ. Սևակի աշխատությունը գուրկ է գրականագիտական բաղկացուցից: Կարծեցյալ Շապուհին վերաբերող բոլոր քննվող հարցերը ունեն բացառապես **բանասիրական** բնույթ: Սինչդեռ վստահաբար կարելի է պնդել, որ Պ. Սևակի դիսերտացիոն ուսումնասիրությունը պետք է շոշափեր ինչպես բանասիրական, այնպես էլ գրականագիտական, գեղագիտական հարցեր ու հարցադրումներ: Սույն ենթադրությունը հավաստիության ուժ է ստանում, եթե նկատի ունենանք երկու համագամանք:

Նախ ավելորդ չէ, մի պահ ժամանակագրական թռիչք կատարելով, վերհիշել Պ. Սևակի «Սայաթ-Նովա» աշխատության կառուցվածքը: Այստեղ Պ. Սևակը, չբավականանալով **բանասիրական** կարևորագույն հարցերի պարզաբանմամբ (տես «Սայաթ-Նովա»-ի առաջին մասը) կատարում է նաև Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ **գրականագիտական** մանրագնին վերլուծություն (տես նույն աշխատության «Սայաթ-Նովայի ստեղծագործությունը» մեծածավալ հատվածը): Նույն մոտեցմամբ էլ, այսինքն բանասիրական և գրականագիտական հարցերի զուգահեռումով պետք է կառուցված լիներ «Կարծեցյալ Շապուհ...»-ը (ինչպես նաև վերջին գիտական աշխատությունը՝ «Սայաթ-Նովան և միջնադարը», որ չհասցրեց ավարտել Պ. Սևակը): Այս մասին է վկայում հենց ինքը Պ. Սևակը: Իր աշխատության «Առաջաբան»-ում խոսելով իր նախորդների կատարած գործի մասին ընդհանուր առմամբ՝ Պ. Սևակը դժգոհում է, որ նրանք, պարզելով «Կարծեցյալ Շապուհի և Շապուհ Բագրատունու «Պատմություն»-ների ոչ նույնակաությունը, հերքելով նորահիատ գրքի հրատարակիչների վարկածը», այսքանով խնդիրը փակված են համարում «բոլորովին ձեռք չտալով կամ համարյա ձեռք չտալով գրքի բովանդակությանը, քննության չառնելով այն ըստ էության»: «Այստեղ ևս,- շարունակում է Պ. Սևակը,- երևան է գալիս մեր տրադիցիոն բանասիրության օրգանական բացերից մեկը. բանասիրական մանրութների փնտրտուքի հարուցած ոգևորության մեջ շատ հաճախ աչքաթող անել երկի, տվյալ գրական-պատմական հուշարձանի գնահատությունը ըստ բովանդակության, ըստ ոչ միայն պատմագրական (նեղ առումով), այլև ըստ պատմական-գրական արժանիքների» (էջ 2): Նույն «Առաջաբան»-ում քիչ անց Պ. Սևակը նշում է. «քննարկվող երկի դիտումը կոնկրետ պատմա-հասարակական ֆոնի վրա և նրա գնահատումը իբրև գերազանցապես գրական հուշարձանի արևելյան վաղ ռենեսանսի շրթայի մեջ,- ահա մեր գլխավոր նպատակը» (էջ 4):

Հասկանալի է, որ մինչ այդ գլխավոր նպատակին հասնելը անհրաժեշտ էր պարզաբանել մի շարք էական բանասիրական հարցեր, որն էլ անում է Պ.Սևակը. և սրանից հետո միայն անդրադառնալ հարցի գրականագիտական կողմին: Եվ ահա մեր առջև մի աշխատություն է, որտեղ բացակայում է նրա «գլխավոր նպատակը» Կարծեցյալ Շապուհի «Պատմության» «դիտումը... արևելյան վաղ ռենեսանսի շրջանի մեջ»: Հնարավոր է արդյո՞ք մի աշխատության «համարյա վերջացրած» լինելը, եթե նրա հիմնական, առաջնային նպատակը իրագործված չէ:

Վերջապես, ընդդեմ «Կարծեցյալ Շապուհ...»-ի «համարյա վերջացրած» լինելու խոսում է ևս մեկ փաստ: Դիսերտացիային առնչվող աշխատանքային թերթերից մեկում Պ. Սևակը կազմել է գրվելիք ուսումնասիրության պլան-ծրագիրը բաժանելով այն համապատասխան գլուխների: Ներկայացնենք այն.

Գլ. Ա - Բուև և Կարծեցյալ Շապուհների հարաբերությունը,

Գլ. Բ - Կարծեցյալ Շապուհի պատմության ժամանակը,

Գլ. Գ - Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը» և «Հացունյաց խաչը»,

Գլ. Դ - Կարծեցյալ Շապուհի «Պատմության» ժամանակաշրջանը,

Գլ. Ե - Կարծեցյալ Շապուհի պատմական ժամանակաշրջանը,

Գլ. Զ - Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը» [իբրև] արտահայտություն հայկական վաղ ռենեսանսի,

Գլ. Է - Հայկական վաղ ռենեսանսի մյուս արտահայտությունները:

Սույն պլան-ծրագիրը, ինչպես տեսնում ենք, հուշում է, որ դիսերտացիան պիտի կազմված լիներ յոթ գլուխներից: «Կարծեցյալ Շապուհ ...»-ի ներկա օրինակը իր բովանդակությամբ հարաբերվում է յոթ գլուխներից միայն չորսին, իսկ ծրագրված երեք գլուխները (ընդգծված Գ, Զ, Է գլուխները) այդպես էլ չեն վերածվել տեքստային շարադրանքի:

Ուրեմն, հակառակ տարածված և արմատավորված կարծիքի «Կարծեցյալ Շապուհ...»-ը ամենևին էլ «համարյա վերջացրած չէր»: Եվ եթե ինքը Պ. Սևակը, կարող էր խոսել աշխատանքի մոտալուտ ավարտման կամ պատրաստի լինելու մասին, քանզի մտքում հստակորեն արդեն ձևակերպված էր ամբողջական ասելիքը, ապա Պ. Սևակի գրական ժառանգությունը ուսումնասիրողները նույնը անել չեն կարող և իրավունք չունեն, քանզի նրանք պարտավոր են նման եզրակացության հանգել միմիայն փաստերի առկայության դեպքում: Իսկ փաստերը, ինչպես տեսանք, հակառակն են վկայում:

Աշխատանքը մնաց կիսատ և անավարտ: Ինչո՞ւ: Բացատրությունը տալիս է նույն ինքը Պ. Սևակը. « ... Դիսերտացիայի պաշտպանությունը, սակայն,

նույնպես անհնարին դարձավ, որովհետև ամբողջ երկրով մեկ տարածվել էր հերթական кампания-ն այս անգամ էլ ընդդեմ պատմական թեմատիկայի: Հայ հին գրականության և բանասիրության մեջ խորացած իմ ընկերներից շատերը, լքելով իրենց տարիների աշխատանքը, միանգամից դարձան սովետահայ գրականության «մասնագետներ», և գրվեցին դիսերտացիաներ այնպիսի մարդկանց «կյանքի ու գրական գործունեության» մասին, որոնք, եթե ապրեին Նոյ նահապետի չափ էլ չէին կարողանա արժանանա նման բախտի»⁵:

Կարապետ Մելիք-Օհանջանյանի նկատմամբ սկսվում են նոր հալածանքներ: Պ. Սևակին էլ առաջարկում են գրել սովետահայ գրականության «նշանավոր ներկայացուցիչների» մասին, օրինակ ... Սարմենի (առաջարկողը գրականության ինստիտուտի այդ ժամանակվա դիրեկտոր Մ. Մկրյանն էր):

Պ. Սևակը թողնում է ամեն ինչ և մեկնում Մոսկվա՝ ուսանելու Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում:

«Կարծեցյալ Շապուհ...»-ին Պ. Սևակը այլևս չի անդրադառնում: Ինչո՞ւ: Բացատրությունները տարբեր են, ավելի ենթադրական, համեմայն դեպս՝ չփաստարկված: Պրանց շարքում առավել հիմնավորը հոգեբանական գործոնն է այդպես էլ չմարող վիրավորանքը և այդ վիրավորանքը մոռանալու ձգտումը: Կարծես ուզում էր չհիշել բիրտությամբ ընդհատված աշխատանքի մասին:

Ամենայն հավանականությամբ, սիրելի-«ահավոր» ուսուցիչ-ղեկավարը Կ. Մելիք-Օհանջանյանը, հետագայում փորձել է «ստիպել» շարունակելու գործը, բայց չի հաջողվել, այլապես նույն Կ. Մելիք-Օհանջանյանի դրդումով և խմբագրությամբ չէր ստեղծվի Մ. Հ. Պարբինյան-Մելիքյանի արժեքավոր աշխատությունը⁶: Ինչևէ, փաստը մնում է փաստ, որ Պ. Սևակի աշխատությունը կիսատ է մնացել, բայց նույնիսկ անավարտ վիճակում այն իրենից ոչ միայն գրապատմական, այլև գիտական լուրջ արժեք է ներկայացնում:

Համառոտ ներկայացնենք մեզ հասած այս աշխատությունը: Կարծեցյալ Շապուհ Բագրատունու (Մ. Աբեղյանի բնորոշմամբ Անանուն գրուցագրի)

⁵ Պ. Սևակ, Անցյալը ներկայացած, էջ 23:

⁶ Տե՛ս «Պատմութիւն Անանուն գրուցագրի», թարգմանությունը զորքարից, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Պարբինյան-Մելիքյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հր., 1971թ.: Շապուհի և նրա մասին այս գրքի աշխատանքները սկսվել են 1970 թվականից առաջ (այդ թվին է վախճանվել Կ. Մելիք-Օհանջանյանը) և ավարտվել են 1970 թվականին (գիրքը տպագրության է հանձնվել 07.04.1970թ-ին, երբ Պ. Սևակը դեռ ողջ էր): Տարվող աշխատանքների մասին անշուշտ Պ. Սևակն իմացել է, բայց... կրկին ոչ մի արձագանք: Սա ևս վկայում է, որ Պ. Սևակը ուզում էր «մոռանալ» «Շապուհ...»-ի մասին: Գուցե և «Շապուհ...»-ը այլևս նրան չէր հետաքրքրում. կար «Սայաթ-Նովա»-ն, գրում էր «Սայաթ-Նովան և միջնադարը» աշխատությունը:

«Պատմության»-ը հանրությունը առաջին անգամ ծանոթացավ 1921թ-ին, շնորհիվ Գ. Տեր-Սկրտչյանի և Ս. Տեր-Սինասյանի հրատարակած գրքի⁷: Հեղինակները գրքի առաջաբանում կարծիք են հայտնում, թե իրենց հրատարակած պատմության հեղինակը 9-րդ դարի հայ պատմիչ Շապուհ Բագրատունին է: Այս Շապուհ Բագրատունին, այլ պատմիչների վկայությամբ, իշխանական ծագում ուներ, աշխարհիկ մարդ էր, հետևաբար նրա կորած «Պատմություն»-ը գտնելը մեծ իրադարձություն պետք է համարվեր: Սակայն «գտնված» «Պատմություն»-ը Շապուհ Բագրատունուն վերագրելը որևէ կերպ չի հիմնավորվում, և արդեն մեկ տարի անց գրքի հրատարակիչների այս վարկածը քննադատվում և հերքվում է մի քանի հայագետների (Ն. Ալիևյան, Հր. Աճառյան, Թ. Ավդալբեգյան) կողմից (նրանց և մյուսներին այսուհետ, Պ.Սևակին հետևելով, երբեմն կանվանենք **հողվածագիրներ**):

Նշված և այլ հողվածագիրները (Ստ. Կանայան, Յ. Մարկվարտ) նորագյուտ «Պատմություն»-ը քննում են տարբեր տեսանկյունից երբեմն անելով խիստ ուշագրավ դիտարկումներ ու եզրահանգումներ:

Պայմանականորեն ասած՝ 1920-ական թվականներին հիմք է դրվում «շապուհագիտությանը», բայց այն անհրաժեշտ զարգացում չի ստանում հետագայում. այդ իսկ պատճառով Պ. Սևակը իր նախորդներին սոսկ հողվածագիր է անվանում (քամահրանքի դույզն-իսկ շեշտադրում չկա այստեղ):

Այնուամենայնիվ, հողվածագիրների կողմից «շապուհագիտության» հիմքը գցվել էր արդեն, իսկ այդ հիմքի վրա կառույցը, Կ. Մելիք-Օհանջանյանի հմուտ ղեկավարությամբ, պիտի բարձրացներ երիտասարդ բանասեր Պ. Սևակը: Կարծեցյալ Շապուհին վերաբերող ամեն ինչ, բանասիրական ամեն անդրադարձ հավաքված և ներկայացված է Պ. Սևակի աշխատության մեջ. նա շատ հարցերում համամիտ է իր նախորդներին (այս մասին չենք խոսելու կամ համարյա չենք խոսելու սույն հողվածում, մանավանդ որ ամենը հասանելի է տպագիր գրականությամբ), բայց և առարկում է, վիճում, առաջադրում և հաստատում է իր վարկածն ու տեսակետը, այսինքն զարգացնում է «շապուհագիտությունը», նոր խոսք ասում:

Ահա այս նորը կփորձենք ներկայացնել այստեղ:

Շփոթությունից խուսափելու մտահոգությամբ և Պ. Սևակին հետևելով մենք ևս իրական պատմիչ Շապուհ Բագրատունուն կանվանենք Իսկական Շապուհ, նորագյուտ գրքի հեղինակին կամ Անանուն զրուցագրին Կարծեցյալ

⁷ Տե՛ս «Պատմություն Շապուհ Բագրատունույ, ի լոյս ածին Գ. Տեր-Սկրտչեան եւ Մեսրոպ Եպիսկոպոս, էջմիածին. 1921թ.:

Շապուհ: Պ. Սևակի տարածայնությունը նախորդների հետ սկսվում է իսկական Շապուհի տոհմաբանությունը, ինքնությունը որոշելու հարցից:

Թ. Ավդալբեգյանը և Մ. Աբեղյանը, խոսելով իսկական Շապուհի անձի ինքնության, տոհմաբանության շուրջ, ենթադրում են, որ նա իսկական Շապուհը, Բագրատունյաց դինաստիայի հիմնադիր Աշոտ Ա թագավորի որդին է⁸: Աշոտ Ա-ն ունեցել է Շապուհ անունով որդի, որը նաև սպարապետ է եղել: Ուստի, ինչպես գրում է Պ. Սևակը, «այս եզրակացության հանգեցնում օգնում է երկու հանգամանք. նախ Շապուհ պատմիչի և Շապուհ սպարապետի նույնանունությունը, ապա նրանց հայրերի նույնանունությունը (Աշոտ «իշխանաց իշխան (ապա թագավոր)» և Աշոտ «ապիհիւպատ=անթիպատրիկ»⁹): Այս շփոթությանը աջակցում է և նույնաժամանակությունը և հայրերը, և որդիները ապրել են համարյա միևնույն ժամանակաշրջանում» (էջ 22):

Այնուամենայնիվ, պատմագիտական աղբյուրների ուշադիր զննությունը և այս խնդրի շուրջ առկա բազմատեսակ փաստերի վերիշնոմը, որ կատարում է Պ. Սևակը, լիովին հերքում-մերժում են իսկական Շապուհի և արքայի որդի Շապուհի սպարապետի նույնականությունը: Այս առթիվ Պ. Սևակը գրում է¹⁰. «Ուխտանեսը իր «Պատմության» մեզ հասած «առաջին հատուած»-ում առաջ է բերում միջնադարյան մի անվավեր պատմություն Կոստանդիանոսի թագի մասին, այդ պատմությունը պարունակող գլուխը (3Ե) վերնագրելով այսպես. «Յաղագս թագին երանելոյն Կոստանդիանոսի թէ ուստի» կամ ո՞րպես յաջողեալ եղև նման ի Տեառն Շափոյ որիոյ (ուղղված Շապիոյ որդւոյ) Աշոտոյ ապահի պատրիկի ի Պատմութեան իւրոյ»¹¹: Գլուխն ավարտելուց հետո Ուխտանեսն ավելացնում է. «Արդ ասացաք զորպիսութիւն թագին ի պատմութենէ Շափոյ»:

Այս թագի անվավեր պատմությունը, ինչպես երևում է, տարածված է եղել հայ ժողովրդի մեջ: Ասողիկն էլ, գրելով Կոստանդիանոս կայսեր մասին, հիշում է. «Սա խնդրեաց և առ զնախկին թագն Դաթի մարգարէին ի Շապիոյ Պարսից արքայէ, զոր բարձրեալ էր ի գլխոյն Յեքոնիայ որդւոյ Յովսիայ Նաբուգոդոնոսոր արքայն, որպէս ուսուցանէ քեզ Պատմութիւնն Շապիոյ Բագրատունւոյ,

⁸ Տե՛ս Թ. Ավդալբեգյան, («Կարծեցյալ Շապուհը»), «Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի», Գիրք Ա և Բ, 1921-1922, էջ 253, ծր.1: Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», հատոր 1-ին, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հր., 1944թ. էջ 463:

⁹ Հավաստության նշանը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

¹⁰ Պ. Սևակի աշխատության սույն հատվածը մեջբերվում է կրճատումներով - Ս. Ղ.:

¹¹ Ուխտանեսն եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց, հատուած առաջին», Վաղարշապատ, 1871, Գլ. 3Ե, էջ 109: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

որդւոյ Աշոտոյ անթիպատրիկի (var. որդիոյ Աշոտի անթիպատրիկի)»¹²... Ավելացնենք... «Բան վասն Պահոց» պատառիկի հիշատակարանը. «Այս ի պատմութենէ Շապիոյ Բագրատունւոյ է, որդւոյ Աշոտի ապուհիպատ պատրիկի...»¹³: Ըստ այսմ Շապուհին անհամեմատ մոտիկ կանգնած պատմիչները Ուխտանեսն ու Ասողիկը, ինչպես և «Վասն Պահոց»-ի հիշատակարանը Շապուհին ճանաչում են իբրև «որդի Աշոտոյ ապահի պատրիկի» կամ «անթիպատրիկի» կամ «ապուհիպար պատրիկի»» (էջ 19-21):

Պ. Սևակի առաջարկած այս և մի շարք այլ փաստերը միանգամայն պարզ են դարձնում Շապուհի պատմիչի և Շապուհի սպարապետի նույնացման անհնարինությունը: Ն. Ակինյանը, Յ. Մարկվարտը և Մեսրոպ Եպիսկոպոսը Իսկական Շապուհին նույնպես ճանաչում են ճիշտ տոհմագրությամբ, այսինքն որպես Աշոտ անթիպատրիկի որդի:

Իսկական Շապուհին առնչվող մեկ այլ հարցում ևս հողվածագիրների կարծիքը նույնպես բաժանվում է: Խոսքը արդեն ոչ թե Իսկական Շապուհի տոհմաբանության, այլ նրա կորած «Պատմության» մասին է:

Յովհ. Դրասխանակերտցու հաղորդած տեղեկությունների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում մոտավոր պատկերացում կազմել Իսկական Շապուհի «Պատմության» բովանդակության, կառուցվածքի, ոճի, ընդգրկած ժամանակահատվածի հնարավոր սահմանների մասին:

Յովհ. Դրասխանակերտցին Շապուհի «Պատմության» մասին գրում է. «Զի թէպէտ ստուգութիւն սահմանական բանի բացատրութեան և զբոլորովին բաժանումն ապացուցից ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն համառօտաբար ընծեռել. սակայն ըստ իւրումն ժամանակի ընտանի գոլով նորա գրուցացն ամենայնի՝ գեղջուկ բանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան»¹⁴:

Այս «գեղջուկ բանի»-ը հողվածագիրներից ոմանք համարում են Իսկական Շապուհի «Պատմության» լեզվին, բառապաշարին վերաբերող: Ուրիշ խոսքով նրանք կարծում են, թե Դրասխանակերտցին վերոհիշյալ հատվածում ակնարկում է, որ Իսկական Շապուհի «Պատմությունը» գրված չէ մաքուր, անխառն գրաբարով՝ իբրև թե համաձայն «քերթողական հրահանգացն»:

¹² Ասողիկ, «Պատմութիւն Տիեզերական», Գանդես 2-րդ, Գլ. Զ, էջ 138: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ. :

¹³ Տե՛ս Սամուել Ամեցի, «Դաւաքմունք», օր. 1, էջ 247-248: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ. :

¹⁴ Յովհ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն հայոց», էջ 131-132: Ընդգծումն իմն է - Ս. Ղ. :

Սակայն Պ. Սևակը, երևան հանելով բազմաթիվ և բազմատեսակ փաստարկներ, ինչպես նաև վկայակոչելով Ղ. Դովնանյանին, ապացուցում է, թե ամեն պարագայում չէ, որ պետք է «գեղջուկ բանի»-ը «աշխարհաբար» կամ «ռամիկ լեզու» հասկանալ, առավել ևս այս պարագայում՝ Դրասխանակերտցու վերոնշյալ հատվածում. «Այսպիսով, «գեղջուկ բան»-ը, գոնե տվյալ դեպքում¹⁵, նշանակում է ոչ թե «լեզու» հասկացությունը, այլ «ոճ», «գրելաձև», «շարադրման եղանակ»¹⁶ » (էջ 13-17): Ըստ այսմ, ինչպես ցույց են տալիս մեջբերված հատվածն ու դրա ծանոթագրությունները, «գեղջուկ բանի» բնորոշումը միշտ չէ, որ ընկալվել է որպես «ռամիկ խոսք», այլ շատ հաճախ վերաբերել է գրավոր տեքստի շարադրման ոճին ու եղանակին: Առավել ևս Դովհաննես Դրասխանակերտցին այդպես չի ընկալում դա: Հավելենք նաև, որ «գեղջուկ բանի»-ը հենց այդպիսի նշանակությամբ են հասկացել Ն. Ակինյանը և զորքի հրատարակիչ Մեսրոպ Եպիսկոպոսը:

Իսկական Շապուհի անձին և «Պատմության»-ը վերաբերող վիճարկելի և ուշադրության արժանի հիմնական դրույթները սրանք էին, որոնց, ինչպես տեսանք, երիտասարդ ասպիրանտ Պ. Ղազարյանը անդրադարձել է ամենայն

¹⁵ Ինչպես կասեր պատմիչը՝ «տղայաբար ինչ յաղգմել» կնշանակեր հարցի տվյալ կոնկրետ կերպարանքին ընդհանուր բնույթ տալը՝ առիաստարակ «գեղջուկ բան»-ը «գեղջուկ բարբառ» չհասկանալու իմաստով: Սակայն, համենայն դեպս, ավելորդ չի լինի նշել, որ մեծ մասամբ մեր հին գրողները «գեղջուկ բան»-ի տակ «գեղջուկ բարբառ» չեն հասկանում: Այսպես, Ն. Ընդրիալին «Խայիոյանք» բառը մեկնելիս գրում է. «Որ ըստ գեղջկացն բարբառոյ իշոցք անուանի» (ոչ «ըստ գեղջկացն բանի» - Պ. Ղ.), տե ս «Թուղթ ընդհանրական», էջմիածին, 1865, էջ 17: Ճիշտ այդպես Մխիթար Դերացին իր գրվածքի լեզուն «գեղջուկ բարբառ» է կոչում (Մ. Դերացի, «Շերմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1832, էջ 1 և 5): Նրանց ժամանակակից մի Հիշատակարանում (տե ս Ալիշան, «Միստան», էջ 114)՝ «գրեցաւ յեղբայրանոցս որ ի զաւառիս Լամբրունի, որ գեղջուկ բարբառով... Գեմրծգեր յորջորջի» և այլն: Միայն Թ. Արծրունին «ռամկորեն ասել» նշանակությամբ ունի «գեղջկաբանել», ըստ որում, մեր կարծիքով, բառաբարդության մեջ արդեն կորցրած «բան»-ի իմաստը: Բացի սրանից հիշվում են նաև «գոեհիկ բան», «ռամկաց (սովորական) խօսք», «հասարակաց բառ», «աշխարհի բառ», «աշխարհական խօսք» կամ «բան», «աշխարհաբառ» (աշխարհաբարբառ) կամ «աշխարհաբար» (տե ս Ղ. Յովնանեան, «Դետագոսութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ», էջ 24): Ծանոթագրությունը և ընդգծումները Պ. Սևակին են – Ս. Ղ. :

¹⁶ «Գեղջուկ բան»-ը ոճի առումով գործածած տեսնում ենք, բացի Դովհաննեսի մեծ ծանրոք հատվածից, նաև Սարգիս վարդապետի մոտ («Ոչ պարտիմք... զգծուարապատում եւ գերտապարական բանից բուռն հարկանել, եւ ոչ գեղջուկ բանիւք աղաւաղել գտեսութիւն մտացն և արհամարհելի ցուցանել զվայելչականն՝ ուսումնասիրաց եւ բանասիրաց» [Շառ Կ, Կոստանդնուպոլիս, 1828, էջ 13: Զարկված է Դովնանյանից]): Լավ հայտնի է Կիրակոս Գանձակեցու խոսքը Սարկավազ վարդապետի մասին («Սորա բանք ամենայն իմաստասիրական ոճով... և ոչ գեղջուկ» [Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, Դուկայան մատենադարան, 1909, էջ 104-105]): Ծանոթագրությունը և ընդգծումները Պ. Սևակին են – Ս. Ղ. :

մանրամասնությամբ, զուտ գիտական մոտեցմամբ՝ փաստացի ապացույցների համադրումով և սրանցից բխող տրամաբանական եզրակացություններով:

Այժմ անցնենք բուն նյութի քննարկմանը, այսինքն՝ Կարծեցյալ Շապուհի գործին առնչվող, հողվածագիրների կողմից առաջադրված վիճահարույց հարցերի լուսաբանմանը և դրանց վերաբերող սևակյան արծագանքներին:

Հիշեցնենք, որ հրատարակված ձեռագրի թե՛ սկզբից և թե՛ վերջից էջեր են պակասում, որի պատճառով էլ գրքույկը չունի հիշատակարան: Միևնույն ժամանակ չկա պատմագրական որևէ այլ աղբյուր, որն օգտված լիներ Կարծեցյալ Շապուհի «Պատմությունից»՝ նշելով հեղինակի անունը: Եթե նկատի առնենք այս երկու հանգամանքները, ապա հասկանալի կդառնա, որ Կարծեցյալ Շապուհի անձի ինքնությունը պարզելու ամեն մի փորձ նախապես դատապարտված է ձախողման: Եվ չնայած հարցի անլուծելի կացությանը, հողվածագիրներից մեկը՝ Ն. Ակինյանը, այդուամենայնիվ, փորձել է գտնել «Կարծեցյալ Շապուհ» անվան տակ թաքնված անձին: Կարծեցյալ Շապուհի «Պատմություն»-ը ուսումնասիրող բանասերներից Ն. Ակինյանը միակն է, ով դիմել է նման քայլի. մյուսները, քաջ գիտակցելով, որ այդպիսի նախա-ձեռնությունը կանխավ միտված է ձախողման, ավելորդ են համարել զբաղվել հեղինակի անձի պարզաբանմամբ:

Ն. Ակինյանի առաջադրած վարկածով Կարծեցյալ Շապուհը նույնացվում է Զովհաննես Կոզեմի հետ: Սակայն այս վարկածը, ինչպես համոզիչ ցույց է տալիս Պ. Սևակը, կառուցված է միայն **ենթադրության** «հողի» վրա՝ հիմքում չունենալով ոչ գիտական ապացույցների «ամրությունը» և ոչ էլ նույնիսկ տրամաբանական եզրակացությունների «հուսալիությունը»:

Հերքելով Ն. Ակինյանի վարկածը՝ Սևակը գրում է. «Հեղինակը որոշելու ամեն մի փորձ առայժմ, քանի մոր տվյալներ չեն գտնվել, կարող է պսակվել ոչ ավելի հաջողությամբ, քան (Ակինյանի – Ս. Ղ.) վերոհիշյալ ենթադրությունը» (էջ 54): Հավելենք, որ «մոր տվյալներ» մինչև օրս չեն գտնվել, և հարցը մնում է չլուծված: Կարծեցյալ Շապուհի «Պատմության» ստեղծման ժամանակի պարզումը բանասիրության կարևորագույն խնդիրն է, քանզի հանձին այս աշխատության հայ գրականությունը ստանում է աշխարհիկ կյանքը պատկերող միջնադարյան արձակի եզակի նմուշ:

Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը», ինչպես գիտենք, հիշատակարան չի ունեցել, առկա բազմաթիվ անախրոնիզմները, պատմական աղաղակող անճշտություններն էլ դժվարացնում են գրքի բովանդակության, նկարագրվող իրադարձությունների միջոցով որոշելու նրա ստեղծման ժամանակը:

Այդ իսկ պատճառով Պ. Սևակի նախորդներից միայն երեքն են (Յ. Մարկվարտ, Ն. Ակինյան և Մ. Աբեղյան) փորձել պարզել Կարծեցյալ Շապուհի գրքի ստեղծման ժամանակը:

Յ. Մարկվարտը հարցին խիստ հպանցիկ է անդրադառնում՝ սոսկ արձանագրելով, որ «... գիրքս ժԱ դարեն յառաջ գրուած չէր կրնար ըլլալ»¹⁷: Ցավոք, վաստակաշատ հայագետը չի մանրամասնում, թե 11-րդ դարի ո՞ր շրջանում է ստեղծվել «Պատմությունը», կամ արդյո՞ք 11-րդ դարում գրված կարծել այն, թե՞ պետք է նկատի ունենալ ավելի ուշ ժամանակաշրջան:

Ն. Ակինյանը, հիմք ընդունելով Յ. Մարկվարտի թվագրումը, ինչպես նաև գրքույկի հեղինակ Յովհաննես Կոզեռնին կարծելու իր սխալ ենթադրությունը, գրում է. «Պատմութեանս գրութեան ժամանակն է ժԱ դարու առաջին քառորդը»¹⁸: Ավելի տրամաբանական (բայց ոչ փաստարկված) վարկած է առաջադրում Մ. Աբեղյանը: Ըստ նրա՝ պատմական այդ գրույցները «չեն կարող ավելի ուշ գրված լինել, քան 11-րդ դարի առաջին տասնամյակները»¹⁹:

Ահա այսպիսի անորոշ և չփաստարկված տվյալներ է ունեցել Պ. Սևակը իր աշխատությունը գրելիս:

Անցնելով ժամանակի հարցի փաստական պարզաբանմանը՝ Պ. Սևակը ավելի ուշադրություն է դարձնում պատմական այն անախորհնդմներին, որոնք չէին նկատվել իր նախորդների կողմից, սակայն ունեին խիստ կարևոր նշանակություն «Պատմության» ժամանակը որոշելու գործում:

Այս առթիվ Պ. Սևակը գրում է. «Նախ քննության կառնենք այն փաստերը, որոնք կօգնեն մեզ գրքի ժամանակի սահմանմանը այն եզրից, որ նայում է դեպի ետ, այսինքն՝ դեպի ժամանակակից պատմիչները՝ դեպի Թովման ու Դրասխանակերտցին: Այնուհետև քննության կառնվեն մնացած այն փաստերը, որոնք կարող են սահմանել գրքի ժամանակը այն եզրից, որ նայում է դեպի առաջ, այսինքն՝ դեպի մեզ մոտեցող ժամանակաշրջանները» (էջ 89):

«Դեպի ետ նայող եզրից» կամ «ստորին եզրից» որոշելու տեսակետից Կարծեցյալ Շապուհի տեքստի մեջ եղած (և այլոց կողմից չնկատված) անախորհնդմներից մեկը Պ. Սևակը դարձնում է բավական մանրակրկիտ քննության առարկա: Խոսքը հայոց Սմբատ թագավորի և աբխազների արքա Դատոսի (Թեոդոս III Կույրի) խնամիությունը և բաղաբական հարաբերություն-

¹⁷ Տե՛ս Ն. Ակինյան, «Մատենագրական հետազոտություններ», Վիեննա, Մխիթարյան տպարան, 1922թ., էջ 219:

¹⁸ Նույն տեղում, էջ 222:

¹⁹ Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», հատ I, էջ 464:

ների պատկերող հատվածի մասին է: Այստեղ պատմականորեն հավաստի է միայն այն, որ Սմբատ I-ի որդի Մուշեղը իսկապես ամուսնացել է արխագների թագավորի դստեր հետ: Հիշվում է նաև Մուշեղի գերության իրական փաստը այն տարբերությամբ սակայն, որ պատմականորեն հավաստի Մուշեղը այդ գերության մեջ կնքում է իր մահկանացուն, մինչդեռ Կարծեցյալ Շապուհի Մուշեղը ազատվում է գերությունից Վասպուրականի իշխան Գուրգենի օգնությամբ:

Պ. Սևակը նախ ապացուցում է, որ Սմբատ I-ին ժամանակակից է արխագների թագավորներից ոչ թե Դատոսը, այլ Կոստանդինը: Ասողիկի օգնությամբ Պ. Սևակը հատնաբերում է նաև Դատոսին՝ պարզելով, որ վերջինս իրականում ժամանակակիցն է ոչ թե հայոց Սմբատ I թագավորի, այլ Սմբատ II-ի. «Այսպիսով, այս անգամ էլ մենք գործ ունենք մի ակնհայտնի անախրոնիզմի հետ, որը, ինչպես համարյա բոլոր անախրոնիզմները, ունի իր արդարացուցիչ համգամանքները, - խառնվել են անվանակից թագավորների՝ Սմբատ I-ի և Սմբատ II-ի օրով կատարված դեպքերն ու դեմքերը, այդ շփոթությանը օգնել է նաև մյուս կողմը, ուր երկու դեպքում էլ հանդես են գալիս արխագական թագավորները... Ըստ որում՝ մեկից (Սմբատ I-ից) առնված է որդին (Մուշեղը), մյուսից (Սմբատ II-ից)՝ արխագական այն թագավորի անունը (Դատոս-Թեոդոս), որն ավելի մոտիկ է եղել (այդ պատճառով հիշողությունը նրա մասին՝ ավելի թարմ), քան արխագական այն թագավորը (Կոստանդինը), որի հետ առնչվել է Սմբատ I-ը»/ Ընդգծումները Պ. Սևակինն են – Ս. Ղ. , էջ 102/:

Փաստորեն, ինչպես ցույց է տալիս մեջբերված հատվածը, Կարծեցյալ Շապուհը ժամանակային առումով ոչ միայն մոտ չէ հայոց Սմբատ I թագավորին (որ ապրել է 10-րդ դարի առաջին կեսում), այլև բավական հեռու է նրանից, որովհետև շփոթում է դեպքեր, որոնք կատարվել են Սմբատ I-ից շատ ավելի հետո և մասամբ վերաբերում են Սմբատ II-ին (որ ապրել է 10-րդ դարի երկրորդ կեսում): Ուստի և Պ. Սևակը եզրակացնում է. «Թեոդոսի (Դատոսի – Ս. Ղ.) փոխարեն Բագրատի գահակալելը կատարվել է 978 թվականին... հանրահայտնի նաև Սմբատ II-ի մահը, որ տեղի է ունեցել 989-990 թվականին: Ըստ այդմ՝ Կարծեցյալ Շապուհը իր գիրքը պետք է գրած եղած լինի համեմայն դեպս այդ (978-990) թվականներից հետո, այսինքն՝ տեղյակ եղած լինի Սմբատ II-ի և Թեոդոս Կուրի թագավորության հանգամանքներին:

Այս է ուսումնասիրվող գրքի գրության ժամանակի մեկ (և հաստատուն) եզրը» /Ընդգծումները Պ. Սևակինն են – Ս. Ղ. , էջ 102/:

Իսկ ահա գրքի ժամանակի «վերին եզրը» սահմանելիս Պ. Սևակը դիմում է մի օժանդակ աղբյուրի տվյալների, որ մինչև օրս հայտնի միակ գրական աղբյուրն է, ուր տեսնում ենք Կարծեցյալ Շապուհի «Պատմությունից» արված

քաղվածքներ (ավելի ճիշտ՝ արտագրություններ): Խոսքը «Պատմութիւն Աստուածընկալ ս. Նշանին ս. Աղբերկու» կեղծ կոնդակի մասին է:

Նշենք, որ այս կոնդակի գոյությունը հայտնի էր նաև հոդվածագիրների ժամանակ²⁰, բայց այն վերջիններիս կողմից անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Հոդվածագիրներից միայն Ստ. Կանայանն է անդրադարձել կոնդակին՝ պարզապես արձանագրելով կոնդակի կեղծ լինելու և Կարծեցյալ Շապուհից օգտվելու փաստը:

Ինչո՞վ է կոնդակը կարևորություն ստանում Կարծեցյալ Շապուհի ժամանակը որոշելու հարցում: Պատասխանը շատ պարզ է. քանզի կոնդակի հեղինակը (կամ հեղինակները) օգտվել և հատվածներ է արտագրել Կարծեցյալ Շապուհից, ապա բնական է, որ վերջինիս «Պատմությունը» արդեն իսկ գոյություն ուներ կոնդակի ստեղծման (ավելի ճիշտ՝ կեղծման) պահին: Ուստի կոնդակի գրության ժամանակը պարզելուց հետո կարելի է մոտավոր պատկերացում ունենալ նաև Կարծեցյալ Շապուհի ժամանակի մասին:

Ինքը՝ կոնդակի տեքստը պնդում է, թե այն ստեղծվել է «Հայոց չորս հարիւր ԽՂ» թվին (995), իսկ հետո նաև «նորոգվել է» հայոց ՋՇԳ (1504) թվականին. Գրիգոր Աղթամարցու ձեռքով²¹: Սակայն, ինչպես գրում է Պ. Սևակը, «միանություն կլիներ կոնդակի կեղծման փաստը դնել ուղիղ 995-ին, այսինքն՝ հավատալ կեղծիքի պնդմանը: Բայց միևնույն ժամանակ, կոնդակի ուշադիր քննությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այն կեղծվել է համենայն դեպս 1504-ից շատ առաջ» (էջ 103):

Կոնդակի բովանդակությունը քննելիս Պ. Սևակը ուշադրություն է հրավիրում երկու եսկան համագամանքների վրա:

Սրանցից առաջինը կոնդակի այն հատվածն է, ուր պատկերվում է մի հրաշք-սքանչելիքի տեսարան: «Այդ հրաշք-սքանչելիքը տեսնելու համար «եկաք և մեք Սմբատ թագաւոր Հայոց և թագուհին իմ Շահանդուխտ (!), և Թամար թագուհին (!!), և նոր թագաւոր Գագիկ քուերորդիս իմ, և բազում իշխանք ու ազատք. Կասակ Սիւնեաց տէր, Ջվանշէր տէր Կապանին, Վարազ Մարդպետական, Գնուն Գուգարաց, Վասակ Բջնոյ... այլև Ուսուֆն ի գաւրացն պարսից դեսպանի»²² (էջ 105):

²⁰ Տե՛ս «Արարատ», հունիս, 1905, էջ 551-559: Ինչպես նաև՝ Ստ. Կանայան «Պատմութիւն Աստուածընկալ ս. Նշանին ս. Աղբերկու և Շապուհ Բագրատունի», «Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921-1922, էջ 137-140:

²¹ Տե՛ս Ստ. Կանայանի նշված աշխատությունը, էջ 139-ի ծր.1-ը:

²² «Արարատ», էջ 555: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.: Ընդգծումները և բացականշության (ռուսերեն) նշանները Պ. Սևակինն են - Ս. Ղ. :

Այստեղ Սևակը կարևորում է այն փաստը, որ կոնդակում «Սմբատը «տիեզերակալ»-ից բացի կոչվում է նաև «Հայկազն (!) որդի Աշոտոյ»։ Եթե չլիներ նաև Շահանդուխտ թագուհու երկիցս հիշատակումը, կարելի էր ուշադրություն չդարձնել այդ «Հայկազն» հորջորջմանը և այն համարել կեղծողի՝ տգիտությամբ Բագրատունիներին տված տիտղոս։ Բայց Շահանդուխտի հիշատակումը դրդում է մեզ վերհիշելու, որ Հայկազյան կոչվող հայկական դինաստիայի խափանումից հետո, երբ նրանց փոխարինեցին Արշակունիները, միայն Սյունյաց իշխաններն էին իրենց կոչում «Հայկազունք» և այդ՝ ինչպես Բագրատունյաց թագավորության ժամանակ, այնպես էլ դրանից առաջ և հետո²³։ Շահանդուխտի հիշատակումն իբրև թագուհու, օգնում է հարցը ավելի պարզ պատկերացնելու։

Սմբատ Բագրատունի թագավորի թագուհու մասին մեզ ոչ մի տեղեկություն չի հասել, և դժվար է, հենվելով միայն այս կոնդակի վրա, ենթադրել, թե նա կոչվում էր Շահանդուխտ։ Դրա փոխարեն մեզ հայտնի է մի Շահանդուխտ, որը նույնպես թագուհի էր և թագուհի նույնպես Սմբատի, բայց ոչ թե Սմբատ Բագրատունու, այլ՝ Սմբատ Սյունաց առաջին թագավորի։ Նա դուստրն էր Աղվանից Սևադա իշխանի²⁴, մայրը Սյունաց Վասակ թագավորի և տատը Անհի Կատրամիդե նշանավոր թագուհու։

Հայտնաբերելով այս ճշմարտությունը և վերընթեռնելով կոնդակի համապատասխան տեղերը այս տեսանկյունից՝ կարելի է նկատել, որ հիրավի Սմբատ թագավորը կոնդակում ունի ոչ միայն Սմբատ I Բագրատունուն բնորոշող տվյալներ (Գագիկ թագավոր Վասպուրականի, Յուսուփ), այլև ակնհայտնի ձևով խառնվել է Սյունաց համանուն թագավորին։ Այդ է ցույց տալիս նաև թագավոր-իշխանների ցուցակում Կապանի տեր Ջվանշերի²⁵ հիշատակումը և այդ՝ հատկապես այն պատճառով, որ «Կապանի տեր» հորջորջումը հազիվ թե հնարավոր լինի արդարացնել X դարի վերջին տասնամյակից առաջ²⁶ (եջ 106-107)։

²³ Տե՛ս Ալիշան, «Սիսական», էջ 2, 15 ա։ Գմմտ. Գովհ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», էջ 176, Ս. Կաղանկատվացի, էջ 384 (երկուսն էլ Սյունյաց Աշոտի մասին) և այլն։ Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ. :

²⁴ Տե՛ս Առ. Օրբելյան, Գլ. Ծե, էջ 299-303։ Սրան չափոս խառնել մյուս Շահանդուխտ թագուհուն, որը նույնպես դուստրն էր Աղվանից Սևադա թագավորագին, բայց կինը Սյունյաց Գրիգոր թագավորի։ Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ. :

²⁵ Անդ. Գլ. ՏԼԵ, էջ 272-274։ Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ. :

²⁶ Գմմտ. Լեո, «Պատմութիւն Հայոց», հատոր III, էջ 665։ Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ. Ընդգծումները և բացակայության (ռուսերեն) նշանները Պ. Սևակինն են - Ս. Ղ. :

Այսպես, երբ Պ. Սևակը պարզ է դարձնում, որ կոնդակում Սմբատ I Բագրատունուն շնորհվել են հատկանիշներ, որոնք իրականում վերաբերում են Սյունյաց համանուն թագավորին, ապա ինքնին ծագում է տրամաբանական ենթադրություն՝ թե կոնդակի գրությունը պետք է կարծել այս Սյունյաց Սմբատից հետո: Ուստի և Պ. Սևակը, օգտվելով Ստ. Օրբելյանի պատմականորեն հավաստի տվյալներից, ցուցանում է Սյունյաց Սմբատի մահվան ճշգրիտ թվականը, որն է 998-ը²⁷: Այստեղից էլ բխեցվում է կարևոր եզրակացությունը. «Ինչպես տեսնում ենք, այս (998) թվականը շատ մոտ է կոնդակի մատնանշած թվականին՝ 995-ին: Եթե զգուշավորությունը թույլ չի տալիս պնդել, թե կոնդակի կեղծումը կատարվել է հիշյալ թվականներին, համենայն դեպս կոնդակում Սյունյաց Սմբատ թագավորի և նրա Շահանդուխտ թագուհու հիշողությունը բավականին թարմ է, ընդ որում գալիս է ոչ գրական աղբյուրներից: Ըստ այդմ էլ, մեր համոզմունքով, կոնդակի կեղծումը կատարվել է համենայն դեպս ոչ հիշատակագրի ձեռքով, այլ 1504-ից շատ առաջ: Ծայրահեղ դեպքում այդ կեղծումը չի կարելի ավելի ուշ դնել Թամար թագուհուց (1184-1213), որը մյուս հայկական թագավորների և իշխանների երկիցս և երիցս հիշատակումների դիմաց հիշվում է միայն մեկ անգամ: Հարցի այսօրինակ լուծման դեպքում պետք է նշել, որ Կ. Շապուհի ձեռագիրը, այսպիսով, արդեն 11-12-րդ դարերում գոյություն է ունեցել և օգտագործվել կոնդակի կեղծման ժամանակ» /Ընդգծումներն իմն են – Ս. Ղ., էջ 107-108/:

Հաջորդ քայլը, որ կատարում և կարևորում է Պ. Սևակը, Կարծեցյալ Շապուհի տեքստի համադրումն է կոնդակի այն հատվածներին, որ արտագրվել են նրանից: Համեմատելով այս գրեթե նույնական հատվածները²⁸, Պ. Սևակը պարզում է, որ աշխարհագրական որոշ տեղանուններ, որոնք բացակայում են Կարծեցյալ Շապուհի տեքստում, ավելացվել են կոնդակում: «Կոնդակը Կարծեցյալ Շապուհի համեմատությամբ ավելացրած ունի «**զԱստունք**», «**զԿերան**», «**զՊելխխան**», «**զՇերվան**», «**զԿորմբերդ**», ինչպես նաև Կ. Շապուհի «Պարտաւ»-ի դիմաց ունի «Պարտայ»» (էջ 108, ընդգծումները Սևակին են-Ս.Ղ.):

Այս հավելված տեղանունները հետաքրքրություն են ներկայացնում առավելապես այն պատճառով, որ դրանք կիրառվել են պատմական կոնկրետ ժամանակաշրջանից միայն. «Հայտնի է, որ Սասունը, իբրև աշխարհագրական միավոր, անհայտ է մեր ոչ միայն հնագույն, այլև հին պատմիչներին: Նա

²⁷ Տե՛ս Ստ. Օրբելյան, Գլ. ԾԴ, էջ 291-293:

²⁸ Տե՛ս «Սրարատ», էջ 551-552 և «Պատմութիւն Շապիդո Բագրատունոյ», էջ 65, «Եվ նա տիրեաց ամենայն աշխարհին...» տողով սկսվող հատվածը:

մտնում էր Տարոնի կազմում և բոլոր դեպքերում հիշվում է այդ անվան տակ: Սասունի առաջին հիշատակումը, իբրև առանձին աշխարհագրական միավոր, գտնում ենք XII դարում, Մատթեոս Ուռհայեցու²⁹, իսկ հետո Ս. Այրիվանեցու³⁰ ու Վ. Բարձրաբերդցու³¹ մոտ: Գիշտ այդպես անհայտ են մեր պատմագրությանը նաև Շերվանն ու Բեյլականը (Բայլականը)՝ Ադրբեջանի այդ հայտնի տեղանունները, որոնցից առաջինը ոչ միայն նշանավոր էր իբրև քաղաք (այդ ավելի Բեյլականին է վայելում), այլև աշխարհագրական հայտնի միավոր էր, իսկ հատկապես XII-XIII դարերում՝ նաև նշանավոր թագավորություն (Շիրվանշահի³² - Շիրվանի առաջին հիշատակությունն էլ տալիս է Ուռհայեցին՝ հիշելով այն վրաց Դավիթ Շինարարի առնչությամբ՝ «Շռուան» ձևով³³): Բեյլականի առաջին հիշատակագիրը «Բեյլական» ձևով, Կիրակոս Գանձակեցին է³⁴ » (էջ 109): Որոշելով այս տեղանունների կիրառման ժամանակային սահմանները՝ Պ. Սևակը եզրակացնում է. «... հիշյալ տեղանունները հայկական որևէ աղբյուրում պատահել կարող են միայն XII-XIII դարերում. այդ սահմանը առայժմ, որքան մեզ է հայտնի, XI դարից այս կողմ բերել հնարավոր չէ: Եվ ահա, կոնդակի մեջ հիշյալ տեղանունների հավելման փաստը և Կարծեցյալ Շապուհի մոտ նրանց բացակայությունը հնարավորություն են տալիս մի կողմից կոնդակի վերջին խմբագրությունը XII-XIII դարերում դնելու և մյուս կողմից, որ ամենից կարևորն է, Կարծեցյալ Շապուհի ժամանակը հիշյալ դարաշրջանից ավելի ետ փնտրելու» (էջ 109-110, ընդգծումները Ս.Ղ.):

Այսպիսով, ինչպիսի՞ պատկեր է ստանում Կարծեցյալ Շապուհի ժամանակի հարցը, երբ հանրագումարի ենք բերում այս առթիվ Պ. Սևակի առաջադրած փաստարկները: Նախ, ժամանակի մի եզրը (շնորհիվ Սմբատ II-ի և Թեոդոս III-ի) սահմանվում է 10-րդ դարի վերջ - 11-րդ դարի սկիզբը, իսկ մյուս եզրը (շնորհիվ կոնդակում հիշված Սյունյաց Սմբատի, Թամար թագուհու և աշխարհագրական տեղանունների) հարում է 11-րդ դարի վերջերին, ծայրահեղ դեպքում՝ 12-րդ դարի սկզբներին: Ցավոք, այստեղ էլ ընդհատվում է «Կարծեցյալ Շապուհ...»-ը աշխատությունը: Ժամանակի հարցին վերաբերող բոլոր հիշյալ դրույթները Պ. Սևակը շարադրել էր «Կարծեցյալ Շապուհի ժամանակը» գլխում, որը, ինչպես արդեն ասվել է, նույնպես անավարտ է մնացել:

Աշխատության վերջին պարբերության մեջ Պ. Սևակը ժամանակի հարցի առթիվ նոր փաստերի ու դրույթների վերհանում է խոստանում, բայց, փաս-

²⁹ Ս. Ուռհայեցի, էջ 130-131, 206-208, 321, 356: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

³⁰ Ս. Այրիվանեցի, էջ 54, 63 և այլն: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

³¹ Վ. Բարձրաբերդցի, էջ 162 և այլն: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

³² Տե՛ս М. В. Сысоев, «Краткий очерк ист. Азербайджана», Баку, 1925 г., հատկապես էջ 69-79: Սգնաղբյուրներ՝ արաբական պատմիչներն ու աշխարհագիրները: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

³³ Ս. Ուռհայեցի, էջ 356: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

³⁴ Կ. Գանձակեցի, էջ 191: Ծանոթագրությունը Պ. Սևակինն է - Ս. Ղ.:

տորեն, խոստումը մնում է չիրականացված: Արդյունքում՝ ընթերցողը միայն մոտավոր պատկերացում է կազմում Կարծեցյալ Շապուհի ժամանակի հարցում Պ. Սևակի առաջադրած լուծման վերաբերյալ: Ուրիշ խոսքով՝ հնարավոր չէ վերջնականորեն ու հաստատապես իմանալ, թե ի վերջո որ դարի որ ժամանակահատվածում է Պ. Սևակը տեսնում Կարծեցյալ Շապուհին: Թեպետև վերը հիշված դրույթները ընդհանուր առմամբ խոսում են այն մասին, որ Կարծեցյալ Շապուհին պետք է ենթադրել 11-րդ դարի II կեսերին:

Սակայն, այնուամենայնիվ, անավարտության մեջ իսկ հստակորեն երևում է 23-24-ամյա բանասեր Պ. Սևակի գիտական մտածողությունը ու խորաթափանցությունը, հմտությունը, բանասիրական խրթին ու խճճված հարցերից ոչ միայն չխուսափելու, այլև համարձակորեն դրանք քննելու, հանգամանակից և բազմակողմանի ուսումնասիրելու և ի վերջո առաջադրված խնդրին գիտականորեն համոզիչ լուծում տալու ձգտումն ու կարողությունը:

Ուշաբժան է նաև, որ ուսումնասիրվող հարցում երիտասարդ ասպիրանտը առնվազն չէր զիջում իր նախորդներին, մեծագույն հարգանք ունենալով նրանց հանդեպ՝ չէր երկնչում նրանցից: Հարկ եղած դեպքում նույնիսկ (ինչպես Հովհաննես Կոզեռնի և Իսկական Շապուհի տոհմագրությունը պարզելու հարցերում) Պ. Սևակը մերժում-հերքում է հողվածագիրներին: Եվ այդ անում է բացառապես գիտական հիմքի վրա, բանասիրական ճշգրիտ ապացույցների ու փաստարկների առկայության դեպքում միայն:

Հատկապես Կարծեցյալ Շապուհի ժամանակի հարցը որոշելու մեջ Պ. Սևակը շատ առաջ էր գնացել և ավելիին էր հասել, քան հողվածագիրներից գեթ որևէ մեկը՝ այդպիսով նաև միանգամայն արդարացնելով ցանկացած դիսերտացիոն աշխատության առաջնային առաքելությունը, այն է՝ գիտական նորություն, նոր խոսք ասելը:

«Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» աշխատությունը, նույնիսկ անավարտ վիճակում, ոչ միայն գրապատմական, այլև գիտական արժեք է ներկայացնում, մասնավորապես միջնադարի հայ հեղինակի և նրա «Պատմության» ժամանակի ճշգրտման հարցում, ինչպես նաև առավել ամբողջական պատկերացում է տալիս Սևակ բանասերի վաղ շրջանի գիտական գործունեության մասին:

The unpublished work "Imaginary Shapuh Bagratuni and the questions of the Early Renaissance in Armenia" by Paruyr Sevak

The article represents the unfinished and unpublished work (doctoral thesis) of Paruyr Sevak, which dates back to the early period of his scientific activities. It's an attempt to define precisely when the work was created and what were the circumstances and the reasons for leaving it unfinished. The work of Paruyr Sevak, even being unfinished, has not only literary and historical, but also scientific value, in particular the questions as regards the medieval Armenian writer and the precision of his "History".